## «Իմ բնակավայրը» նախագծային աշխատանքի ձևաչափ
## «Հանրակրթական դպրոցների տեխնիկական վերազինում»
## մրցութային ծրագրի շրջանակներում

### Նպատակը

«Իմ բնակավայրը» նախագծային աշխատանքի նպատակն է նախագծային ուսուցման մեթոդաբանության կիրառմամբ աշակերտներին ներգրավել սեփական բնակավայրը, համայնքը տարբեր կողմերից ուսումնասիրելու, բացահայտելու և դրա վերաբերյալ ստորև ներկայացված ձևաչափով նյութ պատրաստելու պրակտիկ աշխատանքներում:

նախագծային աշխատանքի ուղղվածությունը՝ պատմական, մշակութային, ռազմական, աշխարհագրական, տնտեսական, ենթակառուցվածքային, դեմոգրաֆիական, գիտական, բնապահպանական և այլ առանձնահատկություններ:
ստեղծագործական և ապահովել համակողմանիություն՝ անդրադառնալով մի քանի, բայց ոչ պարտադիր բոլոր ոլորտներին,
կապերի հաստատմանը:

Սահմանված պահանջներով պատրաստված նյութերը կտեղադրվեն «Աշխարհացույց» ծրագրի հարթակում՝ նշելով դպրոցի և հեղինակների անունները:

* Նախագծային աշխատանքների մեկնարկից առաջ կկազմակերպվի հանդիպում-դասընթաց, որտեղ հանգամանորեն կներկայացվեն պահանջները:

**Նախագծի կարգավիճակը՝** երբեք չհրապարակված

**Նախագծային աշխատանքի տեսակ՝** ստեղծագործական և խնդրի վրա հիմնված

**Նախագծի բովանդակությունը՝** Իմ բնակավայրը: Ուսումնասիրության առարկան կարող է լինել համայնք, քաղաք, գյուղ, շենք-շինություն, հուշարձան, ամրոց, բերդ և այլն: Ուսումնասիրությունը կարող է ներառել վայրի ծագումնաբանական, պատմամշակութային, աշխարհագրական, կլիմայական, տնտեսական և այլ հարցեր:

**Ըստ մասնակիցների՝** խմբային

**Ըստ ընդգրկման՝** դպրոցական, համայնքային

Նախագծի փուլերը

- Թեմայի ընտրություն
- Նախագծի նպատակի, հիմնահարցի սահմանում
- Իրականացման եղանակներ, ձևեր
- Վերջնարդյունքի տեսակները
- Նախագծի պլան և ժամանակացույց
- Աշխատանքային խմբի ձևավորում
- Աշխատանքի բաժանում, առաջադրանքների բաշխում

- Միջառարկայական կապի ապահովում
- Աշխատանքի արդյունքների միջանկյալ քննարկում
- Նախագծի արդյունքների ներկայացում
    - Աշխատանքի վերջնական արդյունքը՝ պրոդուկտը պետք է դպրոցի պաշտոնական էլ. հասցեից ուղարկել smartschools@visualarmenia.org էլ. հասցեին՝ թեմայում գրելով «Իմ բնակավայրը» անվանումը:
    - Աշխատանքը պետք է ներկայացվի որպես մեկ միավոր՝ զիպ արած թղթապանակ, որի մեջ առկա են հոդվածը, լուսանկարները, տեսանյութը, աուդիոնյութը և այլն:

Ո՞րն է «Իմ բնակավայրը» նախագծային աշխատանքի ամբողջական արդյունքը.

- մինչև հինգ էջի սահմաններում մշակված հոդված կամ հոդվածներ՝ համապատասխան խորագրերով
    - Հոդվածի վերջում պետք է նշել
        - նախագծի ղեկավարի անուն-ազգանունը, պաշտոնը, օրինակ՝ Նախագծի ղեկավար՝ Ալվարդ Գրիգորյան (պատմության ուսուցիչ)
        - նախագծի վրա աշխատած մարդկանց անունները և պաշտոնը, օրինակ՝ Սիլվա Մնացականյան (պատմության ուսուցիչ) Աննա Բատիկյան (աշակերտ) Կարեն Պողոսյան (աշակերտ)
        - ԿԱՊԿ ունեցող սովորողների անունները (եթե նախագծում ընդգրկված են) օրինակ՝ Լուսինե Մինասյան (աշակերտ)
- խմբի կողմից արված կամ այլ աղբյուրներից հավաքված լուսանկարներ՝ հակիրճ նկարագրությունով
- խմբի կողմից պատրաստված կամ այլ աղբյուրներից հավաքված տեսանյութեր ու աուդիոնյութ (խրախուսվում է բազմատեսանկյուն մոտեցումը)

- գնահատում տեղի կունենա հետևյալ ընթացակարգով՝
    - նախագծային աշխատանքների ուսումնասիրում
    - հանձնաժողովի կողմից լավագույն աշխատանքների ընտրություն՝ ըստ հետևյալ չափանիշների՝
        - → պատշաճ ուղարկված թղթապանակ
        - → բովանդակային համակարգվածություն (նշել իրականացված քայլերի հերթականությունը)
        - → նախագծային աշխատանքի բարդություն և մասշտաբայնություն
        - → նյութի յուրահատկություն
    - լավագույն աշխատանքներ ներկայացրած դպրոցները կստանան նորագույն ինտերակտիվ հեղուկ-բյուրեղային էկրաններ:

## ՀՈԴՎԱԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

### Հոդվածի պարտադիր դաշտերն են՝

### Համառոտ նկարագիր

Համառոտ նկարագիրը հոդվածի ամփոփ նկարագիրն է՝ առավելագույնը կես էջ:

### Հիմնական բովանդակություն

Ընդարձակ տեղեկությունն ամբողջական հոդվածն է՝ առավելագույնը 2-5 էջ՝ համապատասխան խորագրերով:

### Տեսադարան

Տեսադարան հատվածում դրվում են՝

- լուսանկարներիրենց նկարագրությամբ (պարտադիր դաշտ)
- տեսանյութերի հղումներ իրենց վերնագրով (ցանկալի դաշտ)
- աուդիոնյութեր իրենց վերնագրով (ցանկալի դաշտ)
- 360 ֆայլեր, եթե կան

Հոդվածը պետք է ունենա ժամանակային պարամետր, որը պետք է նշվի: Օրինակ՝ Կիթառիձ՝ Ք.հ. 200-620: Հոդվածի վերջում պետք է նշվի գրականության ցանկը, օրինակը՝ ստորև:

Տեսադարանի նկարներն իրենց նկարագրությամբ պետք է դրվեն հոդվածի տակ՝ տես ստորև: Լուսանկարները պետք է ուղարկվեն նաև առանձին՝ համարակալված՝ այնպես, ինչպես դրված է հոդվածում: Աուդիոնյութերը պետք է ուղարկվեն առանձին, լինեն mp3 ֆորմատով:

Լուսանկարների օրինակներ՝

| | |
|---|---|
| | Սմբատ Բագրատունին թագադրում է Արտաշեսին, հեղինակ՝ Ջ. Ֆուզարո<br><br>Հայ նախարարների խնդրանքով Պարսից արքան 422 թ. Հայոց թագավոր կարգեց Վռամշապուհի (գահակալել է 393-41 թթ.) որդի Արտաշեսին, |
| | Հուստինիանոս կայսր, խճանկար, Սան Վիտալե տաճար, Իտալիա<br><br>Բյուզանդական պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին իր «Կառուցումների մասին» գրքում մանրամասն նկարագրել է Հուստինիանոս կայսեր գահակալել է 527-565 թթ.) շինարարական լայն աշխատանքները, որտեղ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև Բյուզանդական Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական վիճակի, քաղաքների, բերդերի և եկեղեցիների կառուցումների մասին: |
| https://youtu.be/WttuF2U9Wg | Ավարայրի ճակատամարտը |
| MP3 | Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցի, ՎԷՄ ռադիո |

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ


1 «Հայժողովրդի պատմություն» հեղինակներ՝ Հ.Գ. Ժամկոչյան, Ա.Գ. Աբրահամյան, Ս.Տ. Մելիք Բախշյան, Ս.Պ. Պողոսյան, Թ.Խ. Հակոբյան, Երևան

2 «Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտիգերյան քարտեզի» Հակոբ Մանանդյան, Երևան, 1975

3 «Հայոց պատմություն, 10-րդ դասարան, հումանիտար հոսք, Ձանգակ, 2014

Հղում՝

https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/vanvilayet/kazaofvan/locale/geography.html?fbclid=IwAR2fTblvpPtSR8o-oGcTpQ54eLH3RfCHDArixzEyxov-BZs_Y2BizgC1ANI